




ՄԵՆԵՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՓՐԿԶԻ ՀՐԱՃԱՓԱՌԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(Խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, 1961 թվականի ապրիլի 2-ին)

«Յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

Սիրեցյալ և հարազատ զավակներ Մեր, որ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Գողգոթայի տառապանքի բարձունքներեն մեր սրտերուն մէջ կիջնե այսօր մեծ ավետիսը աշխարհաստան՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵՆՈՅ, ՄԱՀՈՒՄԱՐ ԶՄԱՀ ԿՈՆԵՆԱՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՄԱՐ ԻՒՐՈՎ ՄԵՋ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՆԵԱՑ»:

Փա՛նք, փա՛նք հրաշափառ հարության Քո Տե՛ր, Հիսուս Քրիստոս, Փրկիչ մեր:

Հավատալոր և հուսացյալ որդի՛ք Մեր, դուք բոլորդ, միասիրտ, ցնծացե՛ք և ուրախ եղե՛ք, և օրհնեցե՛ք մարդասերն Աստված, զի անա դատարկ է գերեզմանը մահվան և փշրված են շղթաները դժոխքին, մեղքին, չարին:

Անկայուն և որոնող, բայց միշտ հուսացող մարդը, Քրիստոսի հարության լույսով իր հարությունը կերագե: Կերագե, կտֆնի ու կփախ հառաջ: Մերք կգործի ան, բայց նորեն կբարձրանա: Մերք կփանդե, բայց վերստին կկառուցանե: Եվ հավետ կտենչա իր մէջ նոր մարդը կերտել՝ ավելի կատարյալ, ավելի բարի, ավելի ազատ՝ մեղքի և կույր կիրքերու կապանքներեն, իր հայացքը հառած դեպի երկինք, դեպի տեսիլք համբաները մեծ հույսին, դեպի լույս աղբյուրը հավիտենական կյանքին, ա՛յդ ճանապարհով գտնելու համար կյանքի ա՛յս իսկ ափին՝ իմաստն ու նպատակը իր գոյության, գտնելու համար հավասարակշռությունը և խաղաղությունը իր հոգիին:

Տո՛ւր մեզ, Տե՛ր, ամենուս և ամբողջ այս աշխարհին՝ Քու լույսդ և Քու խաղաղությունդ:

Այսօր, երբ Քրիստոս հարության հույսը կավետե մեր հոգիներուն, ինքը բնությունն ալ կսրափի իր բունեն: Անհայտ ակունքներն կշարժի և դեպի արև կբարձրանա ավուրը կյանքին: Տիեզերքի հավետենականության հեռուններեն նոր շունչ մը կփչե, մեր աշխարհին գարուն բերող:

Տե՛ր Աստված, այս ի՛նչ հրաշք է, այս ի՛նչ անսպառ կենարար ուժ է մշտանորոգ, որ կոգեշնչե աշխարհը ամբողջ և հյույն մեր հոգիին:

Գարուն է աշխարհին և Զատիկ մեր հոգիներուն:

Մեղյալ թվացող երկիրը կգարթնու, կվերանորոգվի, կգարդարվի նոր պատմունանով և կդառնա բուրաստան: Երկինքը կդառնա ավելի լուսավոր և պայծառ, լուսինն ու աստղերը՝ ավելի մոտիկ և մտերիմ մեզի:

«Երկինք և երկիր Աստուծո փառքը կպատմեն»: Հափշտակված, երջանիկ, լուռ կխոսին Աստուծո հետ և երգի մը պես անուշ մեր հոգիին մեջ ձայն մը անձանք կնյուսե հեփաքը տիեզերքի և կյանքի խորհուրդին:

Սիրելի՛ հավատացյալներ, գարնան հրաշալի այս լուսաբացին, վերածնած բնության ծոցին մեջ, առավել կզգանք ու կապրինք նշմարտությունը հարու-

յան գաղափարին: Կանգնած կյանքի ու մահվան սահմաններուն վրա, Քրիստոսի հարության ավետիսը մեզ կլուսավորե, մեզ կգորացնե, մեզ կոգեշնչե հավատով և լավասնությունամբ, մեզ կմղե դեպի կյանք, դեպի աշխատանք, դեպի բարի գործ: Վասնզի իզուր չեն մեր ճիգերը, իզուր չէ մեր տփնությունը, իզուր չի վառիր մեր հույսի նրազը, փրկարար լույսը քրիստոնեական մեծ հույսին: Եվ ավելի՛ն տակավին: Քրիստոսի հարության ավետիսը մեզի համար հաղթանակն է նըշմարտության և արդարության և բուրյական արժեքներուն: Հաղթանակ մը բնորոշ ստույգն ու դավին, հաղթանակ մը բնորոշ անհրաժեշտության և բռնության, բնորոշ շարունակ և բարոյագուրկ կիրքերուն:

Քրիստոսի հարության ավետիսը հաղթանակն է մանավանդ ավետարանական սիրո և խաղաղության պատգամին:

Զի Հիսուս հաղթեց աշխարհին, մանավանդ սիրով: Եվ մեզի բոլորիս կտակ մը բողոք, որ մարդկային աշխարհին մեջ՝ միայն սիրով կարելի է նշմարտապես և հաղթել, որ միայն սիրով կարելի է նշմարտապես նոր կառուցանել ու մարդկային արժեքներ ստեղծել, որ միայն սիրով կարելի է նշմարտապես արդարություն և խաղաղություն և երջանկություն բաշխել մարդոց և աշխարհին. «Զի ՈՅ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ ԸՆՊԵՆԻ, ԱՅԼ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՀՈԳԻՆ ՍՈՒՐՔ» (Հռոմ. ԺԳ 17):

Ահա քե ինչո՞ւ Մեր գաղափարն պատգամը է և պիտի մեն ստուգին կոչ մը, ուղղյալ մեր Ս. Եկեղեցիին, մեր նվիրապետական բոլոր Աթոռներուն, համայն հայ հավատացյալ ժողովուրդին և մանավանդ ուղղյալ ձեզի, սիրեցյալ պանդուխտ գավակներ Մեր, որ ամենե՛ր անխտիր սուրբ սրտերով բնորոշի ավետիսը Քրիստոսի հրաշափառ հարության, որ նորոգե՛ք ձեր մեջ հին մարդը, տկար ու անկատար, որ դառնաք նշմարտապես լուսո աղբիւրներ, զվարթերես ու լավատես, և ձեր կյանքը վարե՛ք իմաստությամբ, արդարադատությամբ, նվիրված առաքինի գործերու, որ Քրիստոսի սիրո և խաղաղության ոգին միշտ առաջնորդեն ձեր ֆայլերը և դուք միշտ աղոթե՛ք և աշխատի՛ք անալալ կամֆով, մեր Ս. Եկեղեցիին և ժողովուրդին միության և ներքին խաղաղության համար:

«ՄՐԲԵՑԷՔ Ի ԲԱՅ ԶՀԻՆ ԽՄՈՐՆ, ԶԻ ԵՂԻՑԻՔ ՆՈՐ ԶԱՆԳՈՒԱԾ, ՈՐՊԷՍ ԷՔԴ ԱՆԽՄՈՐՔ, ՔԱՆԶԻ ԶԱՏԻԿ ՄԵՐ ԶԵՆԱԻ ՔՐԻՍՏՈՍ» (Ա. Կորնթ. Ե 7):

Բայց մանավանդ աղոթեցե՛ք և գործեցե՛ք աշխարհի խաղաղության համար: Այսօր, երբ մեր ժողովուրդը, մահվան գերեզմանեն հարություն առած, խաղաղ ու ապահով իր նոր կյանքը կկառուցանե իր Մայր Հայրենիքին մեջ ահա փառասուն տարիներ ի վեր, հարատև վերելի ու ծաղկումի մը նահապարհով, բոլոր հայադղիներուն սեպուն պարտէն է բղձալ, որ խաղաղության պայմանները ամրապնդվին աշխարհի վրա ամեն տեղ, բոլոր սահմաններուն վրա և բոլոր սահմաններեն անդին, որ պատերազմը հոշակվի մարդկության դեմ ոճիր, որ պետությունները իրապես զինաքափվին, որ գիտության հրաշալի նվաճումները կիրառվին խաղաղ ու շինարար նպատակներու, հանուն ժողովուրդներու բարօրության, հառաջդիմության և երջանկության:

Հայաստանյայց եկեղեցին, իր գլուխը ունենալով Ս. Էջմիածինը, այս գիտակցությամբ պիտի շարունակե աղոթել ու գործել այն խոր համոզումով, քե խաղաղության նախապահին ամեն աշխատանք, ամեն զոհաբերում աստվածանուն է, մարդասիրական է և հայրենաշեն:

Խաղաղության պատգամի լուրը Մենք կնկատենք «ԼՐՈՒՄՆ ՕՐԻՆԱՅ ԵՒ ՄԱՐԴԱՐԷԻՅ», և գերագույն հրամայականը մեր կրոնական և ազգային խղիճն:

«ԱՅՍՈՒՀԵՏԵԻ ԱՐԴԱՐԱՅԵԱԼՔ Ի ՀԱՒԱՏՈՅ ԱՆՏԻ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿԱԼՔ ԶԻՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ Ի ՁԵՌՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ» (Հռոմ. Ե 1):

Հավատացյալ գավակներ Մեր, այսօր, երբ ցնծությամբ կտոնենք մեր Տիրոջ՝ «Սիրո և խաղաղության իշխան»-ի հարության մեծ հիշատակը, անխոր-

տակ լավատեսությամբ, անգամ մը ևս ուխտեցե՛ք մնալ հավատարիմ մեր
 Բրիտոնեական լույս հավատքին, և այդ հավատքի վեմ Մայր Աթոռ Ս. Էջմիա-
 ծնին, ուխտեցե՛ք մնալ հավատարիմ եկեղեցիին և Ազգի միասնության և
 անբաժանելիության կանոնին, ուխտեցե՛ք մնալ հավատարիմ մեր խաղաղա-
 տենչ և հայրենաշեն ժողովուրդի գերագույն շահերուն, և հավատարիմ համայն
 աշխարհի խաղաղության և ազգերու բարեկամության աստվածառափ պատ-
 գամին:

Զատիկ է այսօր: Մեծ կիրակին է այսօր: Այսօր «ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ
 ՓԵՍՍՈՆ ԱՆՄԱՀ ԵՒ ԵՐԿՆԱԽՈՐ»: Եվ «ՄԻՒՆ ԼՈՒՍՈՅ ՄԱԳԵԱՑ»:

Արդ, պայծառացե՛ք, դո՛ւք, եկեղեցիներ, պայծառացե՛ք դո՛ւք, հուսացյալ
 զավակներ Մեր: Լո՛ւյս առե՛ք հարության լույսեն, դո՛ւք, որ «ԹԷՊԷՏ ԵՒ ԵՐԲԵՄՆ
 ԷՒՔ ԽԱՒԱՐ, ԱՐԴ ԼՈՅՍ ԷՔ Ի ՏԷՐ, ԻԲՐԵՒ ԶՈՐԴԻՍ ԼՈՒՍՈՅ ԳՆԱՑԷՔ» (Եփես.
 Ե 8):

«ԵՒ ԱԶԱՏԱՑԵԱԼՔ Ի ՄԵՂԱՅՆ ԵՒ ՄԱՌԱՅԵԱԼՔ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՒՆԷՔ ԶՊՏՈՒՂ
 ԶԵՐ Ի ՍՐԲՈՒԹԻՒՆ, ԵՒ ՎԱԽՃԱՆ ՆՈՐԱ ԿԵԱՆՔ ՅԱՒԻՏԵՆԻՑ» (Հռոմ. Զ 22):

Լույս և շնորհք հրաշափառ հարության Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի
 եղիցին ընդ ձեզ:

Դո՛ւք բոլորդ, բոլորդ անխտիր, ապրեցե՛ք, անեցե՛ք ու ծաղկեցե՛ք խա-
 դադ, փառապաշտ, սիրով միաբան, շնորհներով Ս. Հարության և օրհնության
 ներքև մեր Ս. եկեղեցիին և աստվածակառույց Ս. Էջմիածնին:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

Հարուցյալ Փրկչի Իշման Ս. Սեղանեն և Հայոց աշխարհեն՝ ողջո՛ւյն, ող-
 ջո՛ւյն ձեզ և բյո՛ւր օրհնություն: Ամէն:

